



Գուրգեն Մսիսյանի

Բանաստեղծություններ

ՄՊԱՍՈՒՄ

Իջավ ձմեռն անդուռ
Անդուռ իմ տան դռան,
Նստած ասես բանտում
Սպասում եմ նրան:
Նա պիտի գար երեկ,
Նա պիտի գար այսօր,-
Անմար աստղեր բերեր
Ու աստղային անդորր...
Դու ասում ես՝ ու՛շ է,-
Փակիր աչքերդ թաց.
Անթափանց այս մութում
Վերջին լացդ դու լաց...
Ախ, ձմեռ իմ անդուռ,
Անդուռ իմ տան դռան,
Անօթևան, անտուն
Սպասում եմ նրան...

ԿԱՐՈՏ

Միրա՛ծ, ոսկե՛ աղջիկ, դեղի՛ն, հասկե՛ աղջիկ,
Աղջիկ իմ ջինջ աչքով,
Իզուր տարվեցիր դու անձրևների՛ կանչից,
Իզուր հեռացար դու...

Ապրում էիր պայծառ դաշտերում իմ հոգու,
Ծաղիկ էիր բացված,
Բարդու մի ծառ էիր, իմ բարդենի՛, իմ քո՛ւյր,
Իմ ծաղկավոր անցյալ...

Ախ, անձրևից հետո դու ծիածան դարձար,
Շքեղ, հուր ու երահ,

Բլուրներին ընկար, արոտներին արձակ
Ու մարգերի վրա...

Հետո ցնդեց այն էլ. ո՞ւր ես, սե՛ր իմ սիրած,
Ոսկեթև իմ թիթեռ,
Աղջի՞կ էիր, թե վիթ, ցնորք, մուժ ու միրած,
Աղջի՞կ էիր միթե...

Ահա օրը բացվեց լիմոնի պես լուսե
Ու նրա պես անուշ,
Ախ, էլ ոչինչ, ոչինչ իմ սիրտը չի հուզի,
Ախ, էլ ո՛չ մի անուն:

Միրած, ոսկե աղջիկ, սիրո լուսե օրբան,
Միթե էլ չե՞ս դառնա,—
Ե՛կ, խառնվիր երգիս, այս արևոտ օրվան,
Այս ջրին ու գարնան...

Գառների պես սպիտա՛կ
Քո դեմ իմ հույզերը.
Սպիտա՛կ են, սպիտա՛կ
Եվ քո նուրբ ուսերը:

Դու շուրջըս հյուսել ես
Լուսեղեն մի ցանց,—
Անհո՛ւյս են հույսերս,
Անո՛ւշ իմ ցավ:

Գիտեմ՝ կորուստ է անդարձ
Անհնար այս սերը.
Միրում եմ քեզ, ի՛մ հանցանք,
Եվ իմ սերը սև է...

Չգիտեմ՝ քե՞զ եմ սիրում,
Թե՞ իմ սերը,-
Այս սերը խոր ու խորունկ
Ինձ հուզել է:

Ո՞վ ես, ի՞նչ ես, չգիտեմ,-
Մթին հանելուկ,
Գիտե՞ս սիրել դու միթե,
Ու սիրել ո՞ւմ:

Եվ ինչո՞ւ ես այդքան դու
Սառն ու հանդարտ,
Անձրևների տակ խնդուն,
Վարդի պես վարդ:

ՕՐՈՐ, ՕՐՈՐ...

Արևավոր, արևավոր իմ սերերին,
Իմ հույզերին արևավոր ու նո՛ր, ու նո՛ր,
Իմ լույսերին ու լուսավոր իմ հույսերին,
Ընկուզենո՛ւն լայնասաղարթ, օրո՛ր, օրո՛ր,
Օրոր, օրոր:

Օրոր մարգին, արտույտներին, ծառին, ձորին,
Կաճաններին իմ մենավոր, կանաչ բարդուն,-
Օրոր, քնքուշ իմ աքասի՛, օրոր, մորի՛,
Օրոր սարին, հանդին, արտին, օրո՛ր մարդուն,
Օրոր, օրոր:

Շամփուտներին ու ամպերին մութ ու անձև,
Անտառներին, արոտներին, քամուն, քարին,
Օրո՛ր սրտին իմ՝ արտի պե՛ս անձրևածեժ,
Օրո՛ր սրտին վարդերի պես արնակարմիր,
Օրոր, օրոր:

Օրոր նրանց՝ արևային երգիչներին,
Որոնք մի օր երգ երգեցին ու անց կացան,
Կարդացողին օրոր – սրտոտ ու մտերիմ,
Կարդացողին, որ եղել է, հիմա չկա,
Օրոր, օրոր:

ԵՆԵՔ ԲԱՐՊԻ

Խորենին

1

Երեք բարդի ես գիտեմ,
Նրանք նագում են իմ դեմ,
Օ, երեք բարդի.
– Մանկություն՝ իմ դեղնածամ,
Մանկություն՝ իմ, որ անցար
Նոր ցանած արտից...

Զանգի դողանջ եմ հիշում,
Նեղ արահետ, անտառ, շուն
Ու գառներ ճերմակ.
Անհուշ լեռան մի ուսից
Բարձրացող վանք ու լուսին
Եվ ինչ-որ վրան:

Այդ բարդին շա՛տ է հեռու,
Նա մշուշվեց օրերում,
Յոթ սարից անդին.
– Մանկություն՝ իմ դեղնածամ,
Մանկություն՝ իմ, որ անցար
Նոր ցանած արտից:

2

Երկրորդ բարդին, ահա՛ նա,
Բանուկ մի ճամփի վրա,
Երգուն ու խշշուն.
Շուրջը՝ գյուղեր, կանաչ ծով,

Առուն՝ անուշ զնգոցով,
Մարգեր թարմաշունչ:

Շուրջը երկիր մի զարթնող,
Անուշ բուրոդ հերկ ու հող,
Հազար կանչող ձեռք.
Դաշտի վրա լայնանիստ
Զարթնող ուժեր անհանգիստ,
Ակոսների երգ:

Լայնասաղա՛րթ իմ բարդի,
Զարթնող երկրի մեծ ճամփին,
Երա՛զ սպիտակ,
Դու շարժում ես ձեռքերդ
Ու երգում ես երգերդ
Բիլ երկնքի տակ...

3

...Երրորդ բարդի, երրո՛րդ ծառ,
Դեղնասաղարթ ու պայծառ,
Որ կռանում ես.
Նայում ես խոր ու բարի,
Հեռավո՛ր քո անտառից,
– Ի՞նչ է անունդ...

Դու ծերությունն ես անհուշ,
Շուրջդ մուժ ու աղջամուղջ,
Հողը՝ անհանդարտ,
Նա մոմռում է խանդից,
Եռում եռուն եռանդից,
Մնում նոր անտառ:

Կկռանաս դու մի օր,
Սրտամեռ ու գլխիկոր,
Կանաչ արտի դեմ.

Շուրջըդ, շուրջըդ կշափեն,
Նորից խինդով կծափեն
Հագա՛ր բարդիներ:

Եվ օրերը հեռացած,
Սովերների պես ծածան,
Կնստեն սրտիդ.
– Մանկություն՝ իմ ոսկեծամ,
Մանկություն՝ իմ, որ անցար
Նո՛ր ծլած արտից...

ԲԱԼԼԱԴ ՉԱԼՈՅԻ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՄԻՐՈ ՄԱՍԻՆ

1

Չալոն իմ շո՛ւնն էր, չալ-չալ աչքո՛ւն էր,
Չալոն չքնաղ էր, պայծա՛ռ Չալո.
Ընկնում էր ոտիս, աչքը փակում էր,
Ծածկվում էր տատիս հին շալով:

Ես հանում էի մեր հին գգրոցից
Գույնզգույն լաթեր ու սրմա,
Զարդարում էի պոչից մինչև վիզ
Ու տանում դաշտերը նրան:

Չալոն քայլում էր պչրուհու նման,
Սլվլուն պոչը բռնած ցից,
Քսվում էր ոտիս, մոռում էր մռայլ,
Մոռում էր հպարտ, հաճույքից:

Տուն էի բերում մութ փողոցներով,
Շների աչքերից անտես.
Դանդաղ իջնում էր կապույտ երեկոն
Ու ծածկում սար ու դաշտեր:

2

Չալոն իմ շո՛ւնն էր, չալ-չալ աչքո՛ւն էր,

Չալոն չքնաղ էր, պայծա՛ր Չալո,
Ընկնում էր ոտիս, աչքը փակում էր,–
Բայց բանը վերջացավ չարով:

Գաղթի մութ ճամբին կորավ իմ շունը,
Ո՞վ գիտե՛՞ր ձին կոխոտեց...
Շուրջը մեռնում էր վերջին աշունը,
Չմնաց ինձ ո՛չ մի ընկեր...

3

Մի աղջիկ եղավ իմ երկրորդ սերը,
Խաժ աչքով աշխուժ մի աղջիկ,
Ոսկեգույն էին նրա մազերը
Ու բուրում էին դարչին:

Մի օր միասին գնացինք այգի, .
Հուլիսյան գիշերն էր նազում.
Նա չալ-չալ շորեր ուներ իր հագին,
Իսկ այգում՝ խաղողն էր հասնում:

Նստեցինք մենք թավ որթատունկի տակ,
Նա դրեց գլուխը ծնկիս,
Ես շոյում էի նրա վիզը տաք
Ու նայում մշուշված դեմքին:

Օ, սե՛ր իմ, սե՛ր իմ...– ինձ հառել էին
Բիբերը նրա մլարուն.–
Չալո՛ն է նայում նրա աչքերից,
Չալոն է տխուր նայում:

Անհուշ նազում են որթատունկերը,
Իսկ հետո անձրևն է խշշում.
Քեզ չեմ մոռացել, կորած ընկերըս,
Քեզ չեմ մոռացել, իմ շո՛ւն...
.....

Օրերի հեռվում նրա հաչոցը
Հնչում է կարծես լալով...

Չալոն իմ շունն էր, չալ-չալ աչքո՛ւն էր,
Չալոն չքնաղ էր, պայծա՛ռ Չալո...

ՊՈԵՏ

Մորս

Մի ջինջ գիշեր է եղել,
Մի ջինջ գիշեր,
Մայրս՝ ջահել մի եղեգ,
Հայրս՝ ուժեղ:

Բարդիներն են երգել
Ջրերի մոտ,
Ամեն ինչ խորն է եղել
Ամեն ինչ հորդ:

Ու իմ մորըս հուզել է
Բարդիների երգը,
Իսկ դաշտերում փիրուզե
Ծղրիդներն են երգել...

Ախ, ծղրիդնե՛ր շատախոս՝
Լուսնկայի հետ,–
Ծնվեցի ձեր պատճառով
Այսպես պոետ...

ԱՅԳԵՍՏԱՆՆԵՐ

Այգեստաննե՛ր մթին, սաղարթավոր ու վեհ,
Այգեստաննե՛ր, որոնք կարկամել են, տարվել
Բլուրների վրա ու բլուրներն ի վե՛ր...
Այգեստաննե՛ր:

Այգեստաննէ՛ր հուռթի ու կատաղի, հզոր,
Բագուկներով կանաչ ու մրգերով դեղին,
Այգեստաննէ՛ր, որոնք վարարել են այսօր,
Սպասում են սիրով իրենց հավաքողին:

Խնկանման խաղող ու տանձ, ու բալ, ու դեղձ,
Իմաստութիւն՝ ւն՝ աշնան մրգերի պես հասուն,
Իմ մրգաստան երկի՛ր, մրգանման իմ ե՛րգ,
Երգի նման անմահ, երգի նման ասուն...

Առե՛ք, առե՛ք երգըս ոսկեբառ ու հզոր,
Այգեստաննէ՛ր բերքուն ու ձեր գիրկը տարեք...
Այգեստաննէ՛ր, դուք, որ վարարել եք այսօր,
Այգեստաննէ՛ր...

ՉԱՐԵՆՑԻ ՀԵՏ

1.
Հիշո՞ւմ ես, հիշո՞ւմ ես, գալիս էր աշունը,
Ձմեռն սպասում էր մերկ սարից անդին,
Բուլվարի ծառերը խշխշում էին,
Բուլվարը նման էր հիվանդի...
Ու փոշոտ մեր քաղաքի փակուղիներում
Սուլում էր աշնան քամին ցրտաշունչ,
Նա մերթ մղկտում էր աղիոդորմ,
Ու մերթ էլ կատաղի ցնցում:
Նա ծվատում էր մացառ ու թուփ,
Հեկեկում խուլ ու տրտմաթախիծ,
Ամայի անտառում ու դեղնած դաշտում
Փնտռում էր գոնե մի ծաղիկ...
Անտառի տերևներն էին խշխշում,
Մահանում դաշտերն ընդարձակ,
Հիշո՞ւմ ես, հիշո՞ւմ ես, աշուն էր, աշո՛ւն,
Հողմերը խո՛ւ ու նախահարձակ...
Ու քամիներն այդ խուլ և՛ աղեխարշ, և՛ խուլ,

Այդ քամիները խենթ, այդ քամիները չար...
Կարծես մի սև սողուն ուղեղումդ է սողում,
Եվ ուզում ես ճչալ, բայց չես կարող ճչալ...
Ու հոգնությունն այն խոր մեր ուսերին նստած,
Ու մագիլներ սուրսայր, սիրտ ծվատող ու չար,
Երբ թվում էր կյանքը մի լուսնահար ոստան,
Ուր եղյամը ահա անհուսորեն իջավ...

2.

Ես հիմա վերհիշում եմ մեր բոլոր զրույցները,
Մեր բոլոր ճամբաներն անցած,
Այդ ամենը հիմա օրերում մշուշվել են,
Բայց դեռ խայթում են որպես հանցանք:
Ախ, մենք շատ շեր ջարդեցինք միատեղ,
Ու շատ բան մեռավ մեր սրտում,
Ու իջավ մեր ուղեղում տերևաթափը
Մշուշոտ, բաց ու տրտում:
Ու փշրած մեր շերը աններում հանցանքի պես
Ողողում են երակ առ երակ,
Ինչի՞ց մենք դժգոհ էինք, ինչի՞ց, այդ ես չգիտեմ,
Բացվել էր սև մի անդունդ անանց ու մռայլ...
Եվ օրոր էինք երգում խավարած մեր հույսերին,
Որոնում ուրիշ երգ ու սեր,
Իջնում էր ծանր մի թաթ հոգնատանջ մեր ուսերին
Ու թվում էր կյանքը ժանտ ու սև...
Նագան՝ ն էր օղու վերջը, իսկ օղին ինչո՞ւ համար,
Միրտդ ինչի՞ց անբավական էր,
Եվ մի՞ թե այդ չար վերքը նագանի՞ց կառողջանար,
Բժի՞շկ էր միթե նագանը...
Ինչի՞ց մենք դժգոհ էինք, ա՛խ, գուցե նրա համար,
Որ երկրի բոլոր դաշտերից
Հոսում են հորդ առուններ՝ կապույտ ու լուսավարար,
Խնդությամբ առողջ ու բերրի:
Որ բոլոր հյուղերի մոտ ծաղկում է նոր մի սերունդ,

Աճում են նոր ծառեր անգին,
Եվ այն, որ տրոփում է երկիրը նո՛ր հույզերով,
Ու սնում նոր հունտեր կյանքի...
Էլ ինչո՞ւ մեր անիվը փշրվում էր քարեքար,
Կորցրած դադար ու հանգիստ.–
Բանաստեղծ իմ բարեկամ, բանաստեղծ իմ բարեկամ,
«Մթի՛ն են խորշերը կյանքի»...

3.

Ես գիտեմ, որ ոչ մի «կին» չարժի մեր մեկ իսկ երգին,
Ոչ մի երգ այս տենդին մաքրող,
Կբուժվեն, շուտ կբուժվեն արնահոս մեր վերքերը,
Ու առաջ կանցնենք մենք շարքերով:
Կցնդի միֆի նման այս հիվանդ գառանցանքը,
Կդառնանք մենք քաղաքացի,
Լոկ պոետ լինելն հիմա աններում մի հանցանք է,
Մենք ունենք դեռ ճամբա դարձի...
Օ՛, առաջ կերթար կյանքը առանց քեզ և առանց ինձ,
Ներկա՛ կդառնար ապագան,
Ու չկա մի արգելակ հին շենքի փլուզումին
Ու նոր երթին հաղթական...
Միայն մենք կմնայինք շարտված դիրքից դուրս,
Գալիքին խորթ ու անգիտակ,
Լոկ քամին պիտի երգեր մեր անկումն ու կորուստը,
Մի օտար ցանկապատի տակ:
Բարեկա՛մ, մարտի՛կ, ընկե՛ր, ինչ լա՛վ որ մենք կա՛նք դեռ,
Կարող ենք դեռ ուղի՛ հարթել,
Խորտակել ինչ որ կյանքում թունոտ է ու ժանտադեմ
Ու տնկել նոր կյանքի վարդեր:

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Ես գիտեմ՝ ոչ մի, ոչ մի ծաղիկ
Իմ արցունքով չէ, որ ապրում է,

Էլ ինչի՞ս է պետք մուժ ու թախիժ,
Էլ ինչիս է պետք քո համբույրը...

Ես շատ սիրեցի և շատերին,
Դահիճ եղա ոմանց ու ոմանց գոհ,
Ինձ մեղմ օրորեց փշատենին,
Ու ջուրը երգեց քաղցր ու գոհ:

Ու ես ասում եմ, ասում եմ այժմ,
Խաղաղություն՝ ւնձեզ, օրեր անցած,
Ես իմ դեմ եղա այնքա՛ն դաժան,
Գործեցի իմ դեմ այնքա՛ն հանցանք...

Բայց նայում եմ ես նոր աշխարհին,
Այդ նա՛ է,– երգրս, որ հնչում է...

– Ես գիտեմ, ես գիտեմ՝ ոչ մի ծաղիկ
Քո երգերով չէ, որ շնչում է...

Մահից ես վախ չունեմ,
Իմ անունը վկա,
Մեռնելու պես հին գործ
Ու հին արհեստ չկա,
Բայց մեր մահից հետո
Դժվար մահն է գալիս,
Մեր երգերի ահեղ
Դատավորը կգա...

ԲԱՆԴ ՀԱՇԻՎ

Սիրեցիր ինձ ու ես քեզ,
Մենք, մեկմեկու համար որս,
Մեր սերը պարզ էր, որպես
Երկու անգամ երկու՝ չորս:

Օրեր անցան հրահուր,
Գարնան նման անստվեր,
Պուրակ, կաճան ու համբույր,
Քնքուշ խոսքեր ու ստեր:

Երբ չմնաց ոչ մի վարդ,
Տվինք հրաժեշտ մեկմեկու.
Մեզ վրա պաղ ու հանդարտ
Աշնան ամպն էր հեկեկում:

Մենք մեկմեկու ուրացանք
Հանգույցներում օրերի,
Եվ պարտեզն այն եռացանկ,
Եվ ժամերը մտերիմ:

Ու սուտ թվաց ամեն գույն,
Ու անարժեք ամեն որս,
Ու թվաց, որ չի անում
Երկու անգամ երկու՝ չորս...

ՄԵՆ

Ես քո անունը կպահեմ թաքուն,
Չե՛մ հանձնի երբեք ես այն ոչ ոքի,
Որպես սուր պահված հնօրյա բակում,
Ես քո անունը կպահեմ թաքուն:

Ես քո անունը կպահեմ թաքուն,
Չի՛ խլի նրան և ոչ մի ոգի,
Որպես գանձ պահված հնամյա այգում,
Ես քո անունը կպահեմ թաքուն...

Կհսկեմ նրան ահեղ ու անքուն,
Ու մեր լուսավոր ու անհուն կյանքում

Քո սիրով, փառքով, հմայքով կանգուն
Ես քո անունը կպահեմ թաքուն...

ԿԱՐՈՏ

Ո՞ւր ես դու, ի՛մ մանկիկ,
Ո՞ւր ես դու հիմա,
Չե՞ս հիշում անգին իմ,
Ունեիր մի հայր:
Չե՞ս հիշում, գրում էր
Պոեմ ու քանդակ,
Սրտի տեղ արև էր
Կրում կրծքի տակ:
Ախ, գնա՛ց մի օր նա
Երկիր մի հեռու,
Լաց եղան կին ու մայր,
Քնել էիր դու:
Նա հիմա չի հիշում
Էլ ոչինչ, ոչինչ,
Ոչ սարը մշուշում
Ոչ ջրերը ջինջ:
Հիմա նա հիշում է
Ծիծաղըդ զվարթ,
Ու երգում են շուրջըդ
Լիճ, անտառ ու արտ:
Հիշում ես, անգին իմ,
Ունեիր մի հայր:
Ո՞ւր ես դու, մանկիկ իմ,
Ո՞ւր ես դու հիմա...

ԹԵ ՈՒՆԵՒ ԵՍ ՄԵՂՔԵՐ...

Թե ունեի ես մեղքեր, քավե՛լ եմ վաղուց,
Թե անմեղ եմ հալածվել, մի՛ նայիր խոժոռ,

Չէի՝ վերջին երգիչը Պառնասյան թաղում,
Բայց անունս աղոտվեց օրերի փոշում...
Ա՛խ, քո կրակը մնաց սրտում իմ անմար
Երկի՛ր, ես քո երգերը պահեցի անգիր...
Լոկ դու եղար պատվանդան մարմար առ մարմար,
Եղար հզոր հենասյուն հանգի ու կյանքի...
Հիմա քեզ մոտ եմ նորից, ի՛մ երգ, ի՛մ գարուն,
Վերադարձե՛լ եմ առույգ, թեպետ և փոշոտ...
Թե ունեի ես մեղքեր, քավե՛լ եմ վաղուց,
Թե անմեղ եմ հալածվել, մի՛ նայիր խոժոռ...

ԻՆՉՈ՞Ւ ՈՒՇԱՅԱՐ

Ինչո՞ւ ուշացար, գարուն աղջիկ,
Ինչո՞ւ ուշացար, վերջին կարոտ.
Ես վար եմ իջնում լեռան լանջից,
Դու բարձրանում ես լույսով այրող:
Ինչո՞ւ ուշացար, թեթև թիթեռ,
Տե՛ս, իրիկուն է, դեմը՝ գիշեր,
Անցավ արևը լեռան ետև.
Ի՞նչը մոռանալ, ի՞նչը հիշել:
Գրկել քեզ սիրով ու քաղցր լալ,
Փայել մազերդ, լռել անհուշ.
Դու չէի՞ր կարող մի քիչ շուտ գալ.
Ա՛խ, լավ էր երբեք, քան այսպես ուշ:

ՎԵՐԱԴԱՐՉ

Ծիծեռնակներն եկան աշխարհներից հեռու,
Ճամփաներով երկար, ճամփաներով անտես,
Ծիծեռնակներն եկան ճիչով և երգերով,
Իմ աշխարհում բացին երգի, գարնան հանդես:

Եկան ծիծեռնակներն, թևին տվին, իջան
Կտուրներին ծանոթ ու ծառերին,

Ավերել էր ոմանց բույները հողմը չար,
Ոմանք էլ չգտան իրենց տները հին:

Ու թոչում են նրանք, կանչում տազնապահար,
Որոնում են հարմար նոր քիվեր ու սարքեր,
Ու կրում են սեգեր ու հյուսում են համառ
Օթևաններն իրենց անձեռակերտ:

Ու հնչում է նրանց երգը զվարթ, վառման,
Հյուսում են բույները մամուռից ու երգից...
– Ծիծեռնակն է՛րն եկան, կարապետն է՛ր գարնան,
Հեռու աշխարհներից վերադարձան երկիր...

ՀՐԱԺԵՇՏ

Գիշերն իջավ լայն ու անհուն,
Բարի գիշեր.
Տուր խոհերդ քարին, քամուն,
Բարի գիշեր:
Անչար եղիր, բարի հիշիր
Ինչ որ անցավ,
Միրտը կիզող ցավին անցավ.-
Բարի գիշեր:
Երազներին քո անկատար,
Վառ ցնորքին,
Չերգած երգին, լուսնոտ Նորքին
Բարի գիշեր:
Լույս մրգերին, քո երգերին
Ու հերկերին,
Ու մխացող քո վերքերին
Բարի գիշեր:
Բարի գիշեր, գիշեր է ուշ,
Բարի հիշեք,
Անառավոտ, անվերջ գիշեր...
Բարի գիշեր:

